



## Միջազգային փորձը տեսչության բարեփոխումների բնագավառում

### Լեռածություն

Ցանկացած ոլորտում պետության կողմից իրականացվող տեսչական ստուգումներն միջազգայնորեն ճանաչված են որպես սոցիետալ արդյունքների բարելավմանն ուղղված գործիք, լինի դա հակահրդեհային անվտանգություն, մասնագիտական առողջություն, հարկային կարգապահություն, թե հանրային քաղաքականության այլ հարցեր: Տեսչական աշխատանքների միջոցով փորձ է կատարվում հասնել այդ արդյունքներին՝

1. առավելագույնի հասցնելով հստակ պետական նորմերի պահպանումը,
2. նվազագույնի հասցնելով գործարարների համար անորոշությունը,
3. պայքարելով կոռուպցիայի դեմ և
4. նվազագույնի հասցնելով գործարարների ծախսերն ու օպտիմալացնելով պետական ռեսուրսների օգտագործումը:<sup>1</sup>

Որքանով էլ այս ընթացակարգային նպատակները հիանալի են, դրանք դժվար կլինի իրականացնել հաշվի առնելով այն հանգամանքը, որ տեսչական ստուգումները, լավագույն դեպքում, ոչ ճշգրիտ գործիք են: Թեև տեսչական ստուգումները խիստ կարևոր են օրինապահականության համար, պետության համար անհնար է (և անցանկալի) տվյալ տարվա ընթացքում յուրաքանչյուր տնտեսվարող սուբյեկտի մոտ իրականացնել ստուգում՝ երկրում գործող բոլոր օբյեկտների պահպանման տեսանկյունից: Ստուգումների իրականացման նպատակով պետության և մասնավոր հատվածի միջև պահանջվող սերտ փոխգործողությունները իրական բեռ կհանդիսանան ձեռներեցների համար:

Անցած տասը տարիների ընթացքում և, սովորաբար միջազգային դոնորների աջակցությամբ, անցումային տնտեսություն ունեցող երկրները կտրուկ կերպով կատարելագործել են իրենց տեսչական համակարգերը՝ ձեռք բերելու այս արդյունքները և նվազեցնելու գործարարների բեռը: Ըստ հին, խորհրդային մոդելի, ստուգումներն իրականացվում էին կենտրոնական տեսչական ապարատի կողմից՝ կենտրոնացված մի հաստատություն, որը պատասխանատվություն էր կրում գուտ ընդհանուր, բոլոր օղակներն ընդգրկող, կարգապահության հարկադիր պահպանման համար: Սոցիալիստական հասարակարգի անկումից հետո, սակայն, Արևելյան Եվրոպայի և նախկին Խորհրդային Միության շատ երկրներ այս կենտրոնացված, վերևից-ներքև մոտեցումը փոխարինեցին ապակենտրոնացված համակարգով (հավանաբար բոլոր պետությունների համար ամենաընդունված համակարգը): Ապակենտրոնացված ստուգումների ռեժիմի համաձայն, որոշակի ստուգման պարտականությունները բաշխվում են կառավարության ամբողջ համակարգում՝ նախարարությունները կամ տեսչությունները լիազորվում են իրականացնել իրավակիրարկման միջոցառումներ իրենց իրավասությունների որոշակի ոլորտներում (օր.՝ Առողջապահության նախարարությունն իրականացնում է առողջապահության ոլորտի ստուգումներ):

Թեև տեսչական ստուգումների կենտրոնացված համակարգի նկատմամբ ապակենտրոնացված համակարգն ունի բազմաթիվ առավելություններ, այն նույնպես խնդիրների առջև է կանգնում: Եթե

<sup>1</sup> Սքոթ Ջեյքոբս և Սեզար Քորդոլա, «Նորմերի գծով ստուգումների առաջավոր փորձ. բարեփոխողի ուղեցույց», մշակված ՀԲ համար, 2005թ. դեկտեմբեր <http://rru.worldbank.org/Documents/PapersLinks/6943.pdf>.

կառավարությունները չեն մշակում համակարգված և թափանցիկ իրավակիրարկման ծրագրեր, տեսչական ստուգումները կարող են ծանրաբեռնել գործարարներին և, հատկապես անցումային տնտեսությամբ երկրներում, նպաստել կոռուպցիոն ռսիկերի առաջացմանը: Այս խնդիրներից գերծ մնալու նպատակով ապակենտրոնացված համակարգեր ունեցող կառավարությունների համար կարևոր է ուշադրությունը կենտրոնացնել ինչպես առանձին տեսչությունների, այնպես էլ ամբողջական պետական տեսչական համակարգի արդյունավետության վրա: Եթե անգամ առանձին տեսչություններ իրենց գործընթացների կատարելագործման և կարգապահության պահպանման նպատակով կարող են իրականացնել այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են ռիսկի վրա հիմնված ընտրության միջոցով օրենսդրության կատարման նկատմամբ վերահսկողությունը կամ խախտումների կամավոր նվազեցման ծրագրերը, գործարարների և ազգային արդյունքների վրա դրա ազդեցությունը կարող է փոքր լինել, եթե պետական այլ մարմինները նույնպես բարեփոխման չենթարկվեն: Այսպիսով, հաջողված տեսչական ռեֆորմների գլխավոր առանձնահատկությունը **կառավարության մակարդակով ստուգումների/տեսչությունների համակարգում է:**

Այս փաստաթղթի նպատակն է ուսումնասիրել, թե ինչպես են մի շարք անցումային երկրներ տարբեր վարչական եղանակներով իրականացնում տեսչական ստուգումների համակարգումը՝ հաղթահարելու ապակենտրոնացված տեսչական համակարգի թերությունները: Անցյալ տասնամյակում այս ոլորտում եղել են միջառք նվաճումներ միջազգային առաջավոր փորձի առումով, և այն երկրները, որոնք փորձում են կատարելագործել իրենց ստուգումները կամ առանձին տեսչությունները, կարող են շատ գործնական մոտեցումներ քաղել այդ մոդելներից:

### ***Ապակենտրոնացված ստուգումներ. վարչական դժվարություններ***

Ապակենտրոնացված տեսչական համակարգ ընտրած երկրներն ունեն ընդհանուր դժվարություններ այդ համակարգերը առավելագույն արդյունավետությամբ գործադրելու հարցում: Ապակենտրոնացված համակարգերն ունեն ընդհանուր թույլ կողմեր, այդ թվում՝

- Ցրված փորձառություն

Տեսչությունների պատասխանատվության ոլորտների տարանջատումը հանգեցնում է փորձառության ցրման, երբ յուրաքանչյուր առանձին տեսչություն գործ ունի անվտանգության կամ իրավունքների միայն մի փոքր բնագավառի հետ: Տեսչությունները, որոնք կարող են ունենալ փոխլրացնող իրավասություններ (օրինակ՝ Աշխատանքի տեսչությունը՝ մասնագիտական անվտանգության, Առողջապահության նախարարությունը՝ առողջության, որևէ Տեխնիկական կենտրոն՝ սարքավորումների ստանդարտների բնագավառում), ապակենտրոնացվածության պարագայում բաժանված են ըստ ոլորտների և կանոնավոր կերպով չեն կարող օգտվել միմյանց ձեռք բերած փորձից:

- Տեղեկատվության փոխանակման բացակայությունը

Ցրված փորձառություն նշանակում է ցրված տեղեկատվություն, սակայն տեսչական ծառայությունների տարանջատումը խնդիր չի լինի, եթե տարբեր տեսչությունների միջև լինեն տեղեկատվության փոխանակման կոնկրետ մեխանիզմներ: Դժբախտաբար ապակենտրոնացված տեսչական համակարգեր ունեցող շատ երկրներ չեն հիմնել ինստիտուցիոնալացված տեղեկատվության փոխանակում և գործում են ըստ անհրաժեշտության սկզբունքով, երբ համակարգման հարց է ծագում:

- Ավելի մեծ բեռ գործարարների վրա

Համակարգման քացակայությունն իրական ծախս է հանդիսանում գործարարների համար, ովքեր իրենց ժամանակն անց են կացնում կամ տարբեր տեսչություններին ձևեր ներկայացնելով, կամ, էլ ավելի վատթար դեպքերում, թույլ տալ, որ տարբեր մարմիններ տարբեր ժամանակամիջոցներում իրենց մոտ իրականացնեն ստուգումներ: Գործող ձեռնարկությունների վրա դրված ստուգումների բեռը կարող է խոչընդոտել իրական արդյունքի թողարկմանը և ետ պահել ուղակի ներդրումները հեռանկարում: Ավելին, ավելի շատ տեսչական ստուգումները նշանակում են ավելի շատ ռիսկեր կոռուպցիայի համար, որը լրացուցիչ վնաս կպատճառի տվյալ երկրում գործարար մթնոլորտին:

- Աշխատանքների կրկնորդում կառավարության ներսում

Առանց տեսչական գործընթացի կենտրոնացված հսկողության և տեղեկատվության փոխանակման, անկասկած կլինեն ստուգումների և տվյալների հավաքագրման կրկնումներ: Բացի գործարարների համար բեռ հանդիսանալուց, սա կտանի նաև կառավարությունում աշխատանքների կրկնորդման, քանի որ տեսչությունները կվատեն իրենց թանկարժեք ռեսուրսները, իսկ աշխատողները անօգուտ կերպով զբաղված կլինեն արդեն ինչ-որ տեղ առկա տվյալների ձեռք բերմամբ:

- Ստուգումների որակի և ընթացակարգերի տարբերություններ

Գործարարների համար տարբեր տեսչություններին պատասխան տալու անհրաժեշտության հետ զուգակցված, կա նաև ստուգումների հետ կապված իրական խնդիր՝ ստուգումների իրականացման ընթացքում դրանց տարամետ որակը և տևողությունը: Սա հիմնականում կառավարության տարբեր տեսչությունների տարբերությունների պատճառով է, քանի որ տարբեր տեսչական մարմինները տարբերվում են իրենց հնարավորություններով, բյուջեով և աշխատողների թվով: Ի լրումն, քանի որ յուրաքանչյուր նախարարություն մշակում է ստուգումների իր ուրույն վարչական ընթացակարգերը (որոշ դեպքերում առանց հաշվի առնելու միջազգայն առաջավոր փորձը), գործարարները բախվում են անորոշության՝ առանձին պետական մարմինների կողմից իրականացվող ստուգումներից իրենց ակնկալիքների առումով:

- Ոչ համարժեք արդյունքներ

Ի վերջո, այս վարչական խնդիրների հետ մեկտեղ, ապակենտրոնացված համակարգերը սովորաբար այնպես չեն կառուցված, որ նպաստեն գործարարների համար էլ ավելի լավ արդյունքների հասնելու խթաններ ստեղծելուն, լինեն դրանք հակահրդեհային անվտանգությունը, աշխատավայրում ստացած վնասվածքներ թվի կրճատումը, թե ավելի լավ հանրային առողջությունը կամ հարկային կարգապահության մեծացումը: Հաշվի առնելով ստուգումների այն բազմազանությունը, որին ենթակա է ցանկացած ընկերություն և աշխատանքների կրկնորդումները, ընկերությունների հիմնական խթանն այն է, որ ավելի շուտ գերծ մնան որևէ ընթացակարգ խախտելու համար պատժվելուց, քան թե նախահարձակ քայլեր ձեռնարկեն՝ ուղղված անվտանգության պահպանմանը:

### ***Տեսչական ստուգումների համակարգման միջազգային փորձը***

Թեև այս մարտահրավերները կարող են վիատեցնող թվալ այն երկրների համար, որոնք ընտրել են ապակենտրոնացված տեսչության ծառայությունների մատուցման ճանապարհը, միջազգային առաջավոր փորձից կարելի է շատ վարչական և գործառնական դասեր քաղել ապակենտրոնացվածության պահպանման պարագայում այդ խնդիրների թեթևացման և համակարգման ամրապնդման համար: Այնպիսի անցումային երկրներ, ինչպիսիք են Լեհաստանը, Ուզբեկստանը, Լատվիան և Սլովենիան, համակարգման հարցը լուծել են գերատեսչական մակարդակով ստեղծելով մի պաշտոնական մարմին, որի պարտականությունն է

վերահսկել կառավարության ներսում բոլոր տեսչությունների աշխատանքը: Այդպիսի մարմնի միջոցով տեսչական ծառայությունները մնում են ապակենտրոնացված իրավասու նախարարություններում, բայց բուն ստուգումներն ունենում են կանոնակարգված և պաշտոնական ձևաչափեր վերոնշյալ խնդիրների կարգավորման համար:

Աղյուսակ 1 – Ստուգումներ տեսչության բարեփոխման հարցի վերաբերյալ

| Խնդիրներն ապակենտրոնացված համակարգերում        | Տեսչությունների համակարգման խորհրդի ներքո                                     | Համալիր ստուգումների ներքո  |
|--|---|---|
| Ցրված փորձառություն                            |   | Յուրաքանչյուր տեսչություն կկարողանա մասնագիտանալ իրենց փորձառության ոլորտում, բայց բոլոր ոլորտները ներկա կլինեն ստուգման ժամանակ                            |
| Տեղեկատվության փոխանակման բացակայություն       | Տեղեկատվության փոխանակումն արվում է խորհրդում                                 | Բոլոր մարմինները կհավաքագրեն տեղեկությունները հենց աղբյուրից  |
| Ավելի մեծ բեռ գործարարների վրա                 | Ստուգումների պլանավորման ավելի լավ համակարգումը նվազեցնում է բեռը             | Նույն վայրում բոլոր տեսուչների գտնվելը նշանակում է նվազ անորոշություն: Ավելի փոքրանում են կոռուպցիոն ռիսկերը, երբ ներկայացված են մի քանի գերատեսչություններ |
| Աշխատանքների կրկնորոգում կառավարության ներսում | Պլանավորման միջոցով հստակեցվում է պետական համակարգի աշխատանքները              |   |
| Ստուգումների տարբերվող որակ և ընթացակարգեր     |   | Մեկ ստանդարտացված ստուգում, որն իրականացվում է բոլոր գերատեսչությունների կողմից   |
| Ոչ համարժեք արդյունքներ                        | Կառավարության ամբողջ համակարգը աշխատում է դեպի ավելի լայն նպատակի իրականացում | Արդյունքները բարելավվում են ստորին օղակներում համագործակցության միջոցով   |

Թեև համակարգող խորհրդի ստեղծմամբ լուծվել են վերը նշված որոշ խնդիրներ, դա բավական չէ ստուգումների ապակենտրոնացված ռեժիմի պատճառով առաջացող բոլոր խնդիրների լուծման համար: Մյուս դժվարությունների հաղթահարման համար կենտրոնացված վերահսկողության վարչական փոփոխության հետ միասին երկրները ընդունել են նաև համալիր ստուգումների գաղափարը: Համալիր ստուգումները ավելին են, քան զուտ վերահսկողության համակարգումը, դրանք նշանակում են հենց ստուգումների իրականացում համատեղ այլ նախարարությունների հետ:

Որոշ երկրներում, ինչպիսին է, օրինակ, Ղազախստանը, համալիր ստուգումներն ընդգրկել են միայն երեք նախարարություն (հիմնականում աշխատանքի և սանիտարահիգիենիկ տեսչությունները տեխնիկական անվտանգության գործակալության հետ միասին GosGorTechNadzor), մինչդեռ մի շարք այլ նախկին խորհրդային և Կենտրոնական Եվրոպայի երկրներում, **բոլոր** ստուգումներն իրականացվում են միևնույն ժամանակ, որի արդյունքում տվյալ ստուգմանը ներկա են լինում 10-15 տեսուչ:

Այս երկու նորամուծությունների համակցումը նպաստել է ապակենտրոնացվածության պատճառով առաջացած խնդիրների մեղմացմանը (տես՝ Աղյուսակ 1): Ինչպես վերը նշվեց, թեև Համակարգող խորհրդի և համալիր ստուգումների հիմքում գտնվող տեսությունը նույնն է, դրա

իրականացումն ու կիրառումը լայնորեն տարբերվում են ըստ երկրների: Հետևյալը պարզապես այս նորամուծությունների միջազգայնորոն ընդունված մի քանի օրինակներ են տարբեր երկրներում.

## Ուզբեկստան

Ուզբեկստանը 2001 թվականին ունեցավ բարդ և խրթին տեսչական գործընթացների ժամանակաշրջան՝ երկրում ընկերությունները նշում էին, որ իրենք տարեկան միջինում ենթարկվում էին 6.2 ստուգման՝ կառավարության 40 ստուգումներ իրականացնելու լիազորությամբ օժտված տարբեր մարմինների կողմից: Տեսչական ռեժիմի մեկ այլ առանձնահատկություն, առավելապես կապված այն դրույթի հետ, որով տեսչություններին թույլ էր տրվում իրենց նշանակած տուգանքների 10-15%-ը պահել սեփական բյուջեի նպատակների համար, խթան էին հանդիսանում ոչ այնքան անվտանգության ապահովման, որքան հնարավորինս շատ տուգանք հավաքելու համար: Այս խնդիրները, զուգակցված տեսուչների համար ուսուցման բացակայության հետ, հանգեցրեցին գործարար լայն համայնքի դժգոհությանը և այն ընկալման արմատակալմանը, որ յուրաքանչյուր տեսչություն կոռումպացված է:

Ստուգումների ամբողջ ռեժիմի կարգավորման նպատակով հիմնվեց Ուզբեկստանի տեսչությունների համակարգման հանրապետական խորհուրդը (ՏՀՀԽ), որպես ՓՄՁ և գործարար միջավայրի կատարելագործման IFC ծրագրի մաս: Խորհուրդը բաղկացած է պետական մակարդակով 21 անդամից (տես՝ աղյուսակը) և հանդիսանում է Ուզբեկստանում բոլոր ստուգումների իրականացման կենտրոնակետը: Խորհուրդը համակարգում է ստուգումները և վերլուծում է դրանց արդյունքները, և բոլոր ստուգումները (բացառությամբ քրեական հետաքննության հետ կապված ստուգումների) պետք է հաստատվեն Խորհրդի կողմից: Այս մոտեցմամբ ստուգման բեռը դրվում է պետության վրա, որովհետև Խորհրդի որոշման բացակայության դեպքում ցանկացած ստուգում համարվում է անօրինական, և ձեռներեցն ունի իրավունք թույլ չտալ տեսուչներին մուտք գործել իր տարածք: Այսպիսի մոտեցումը ստիպում է Խորհրդի անդամներին համաձայնության գալ՝ չվատնելու թանկարժեք ռեսուրսները անօրինական ստուգումների վրա:

Ուզբեկստանի դեպքում ամենամեծ նորամուծություններից մեկը ստուգումների համատեղ պլանավորումն էր Խորհրդի անդամների կողմից: Ըստ օրենսդրության, բոլոր առանձին տեսչությունները պետք է Խորհրդին տարեկան կտրվածքով ներկայացնեն այն ընկերությունների ցուցակը, որ իրենք նախատեսում են ստուգել: Հետո Խորհուրդը գնահատում է ցուցակը, հանում այն ստուգումները, որոնք համարում է չարդարացված, հաստատում է ստուգումների ընդհանուր ծրագիրը և ետ է ուղարկում այն տարբեր տեսչություններին: Չծրագրված ստուգումների դեպքում տեսչությունը դիմում է ներկայացնում Խորհրդին չծրագրված ստուգում իրականացնելու համար, որը քննարկվում և հաստատվում է կամ մերժվում 2 շաբաթվա ընթացքում: Տեղական ինքնավարությունը հարգելու նպատակով ստուգումները պետք է հաստատվեն նաև Խոկիմի (մարզպետ) կողմից տարածքային մակարդակով: Ստուգումների վերջին մակարդակը՝ արտակարգ ստուգումները, պահանջում են Խորհրդի կողմից որոշման կայացում դիմումը ներկայացնելու օրը (սա հիմնականում վերաբերում է համաճարակային և սանիտարական ճգնաժամերին):

Խորհրդի ստեղծման և ստուգումների պլանավորումը ՏՀՀԽ վրա դնելու հետ միասին առանձին տեսչությունները մասներդեցին «համալիր ստուգումների» գաղափարը: Ըստ այս գաղափարի, բոլոր նախատեսված ստուգումներն իրականացվում էին երկու կամ ավելի հսկող մարմինների կողմից միաժամանակ (պրակտիկայում փաստացիորեն մասնակցում էին 6-ից 10 կառույց): Համալիր ստուգումներն ուղեկցվում էին տեսուչների համար ստանդարտացված ստուգման թերթիկների հաստատմամբ՝ անօրինակ գործողությունների կամ անհավասար վերաբերմունքի դեպքերի սահմանափակման համար, և ավելի լայն հանրությանը ներգրավման արշավով՝ Արդարադատության նախարարության միջոցով, գործատուներին իրենց իրավունքների մասին տեղեկացնելու նպատակով:

| Աղյուսակ 1<br>Ուզբեկստանի տեսչությունների համակարգման հանրապետական խորհրդի կազմը |   |
|--|---|
| 1.   | Խորհրդի նախագահ – Ուզբեկստանի Հանրապետության նախագահի խորհրդական, նախագահական վարչակազմի հսկող տեսչության պետ |
| 2.   | Խորհրդի նախագահի տեղակալ - Հարկային պետական կոմիտեի պետ   |
| 3.   | Խորհրդի քարտուղար – Հարկային պետական կոմիտեի հսկող կառույցների համակարգման վարչության պետ                     |
| 4.   | Վարչապետի տեղակալ – ֆինանսների նախարարություն   |
| 5.   | Նախարարների կաբինետի վարչակազմի պետ   |
| 6.   | Նախարարների կաբինետի վերլուծությունների վարչության պետ  |
| 7.   | Ուզբեկստանի Հանրապետության նախագահի պետական խորհրդականի տեղակալ   |
| 8.   | Նախագահի վարչակազմի գլխավոր տեսուչի պաշտոնակատար  |
| 9.   | Գլխավոր դատախազ   |
| 10.  | Մաքային պետական կոմիտեի պետ   |
| 11.  | Արդարադատության նախարար   |
| 12.  | Օրենքների և իրավական հարցերով խորհրդարանական հանձնաժողովի նախագահ   |
| 13.  | Արտադրական աշխատավայրերում անվտանգության մոնիթորինգի և հանքերի պետական գործակալության գլխավոր տնօրեն          |
| 14.  | Արտաքին տնտեսական գործերի, ներդրումների և առևտրի նախարարի առաջին տեղակալ                                      |
| 15.  | Պետական գույքի կառավարման պետական հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ  |
| 16.  | Ներքին գործերի նախարարի առաջին տեղակալ  |
| 17.  | Ազգային անվտանգության ծառայության պետի առաջին տեղակալ   |
| 18.  | Կենտրոնական բանկի նախագահի առաջին տեղակալ   |
| 19.  | Բնապահպանության պետական հանձնաժողովի նախագահի առաջին տեղակալ  |
| 20.  | Արտակարգ իրավիճակների նախարարի առաջին տեղակալ   |
| 21.  | Առողջապահության նախարարի առաջին տեղակալ - գլխավոր սանիտարական բժիշկ   |

Թեև այս բարեփոխումները դեռևս շարունակվում են, դրանց արդյունքներն առ այսօր բավական տպավորիչ են եղել: Գործատուներն ավելի տեղեկացված են եղել իրենց պարտականությունների և իրավունքների մասին (IFC-ի կողմից հարցման ենթարկված ՓՄՁ-ների կեսն ասել է, որ ստուգումների ժամանակ օգտագործում են իրազեկման նյութերը), և ստուգումները շատ ավելի համակարգված են եղել կառավարության կողմից: Այս ամենի արդյունքում յուրաքանչյուր ընկերության հաշվով իրականացվող ստուգումների միջին քանակը 2001թ. 6.2-ից նվազել է մինչև 1.2-ի 2004թ., ամուղղելի օրինազանցներին ուշադրության կենտրոնում պահելու հետ միաժամանակ քչանում էին մասն օրինապահ ընկերություններին տեսուչների այցելությունները: Եվ այս տարում ստուգման ենթարկված ՓՄՁ-ների թիվը 2001թ. 11%-ից աճեց մինչև 67% 2004 թվականին: Թեպետ տեսչությունների համակարգում դեռևս շատ խնդիրներ կան (ներառյալ՝ բարձր ռիսկայնություն պարունակող ընկերությունների փոխարեն միայն հաջողակ ընկերությունների վրա ուշադրությունը կենտրոնացնելու հստակորեն երևացող միտումը), Ուզբեկստանի ավելի լայն տեսչական ռեժիմը 2001 թվականից ի վեր զգալիորեն կատարելագործվել է:

## Լատվիա<sup>2</sup>

Լատվիան առաջին երկրներից մեկն էր, որն իրականացրեց համապարփակ տեսչական բարեփոխում, և անշուշտ հանդիսանում է Ուզբեկստանում բարեփոխումների մոդելը: Լատվիայում պետական տեսչությունների համապարփակ բարեփոխում սկսվեց 1999 թվականին, որը շարունակվեց 2003 թվականի ընթացքում, և հանդիսանում էր ավելի լայն՝ ներդրումների առջև ծառայած վարչական անջրպետների վերացման, ծրագրի մի մասը: Այս շտապողականության համար ազդակ հանդիսացավ առևտրի խթանման գծով Լատվիայի կողմից շարունակաբար ցածր ցուցանիշների դրսևորման հանգամանքը, քանի որ Համաշխարհային Բանկի կոռուպցիայի մասին հարցումը և Արտաքին ներդրումների խորհրդատվական ծառայության (FIAS) կողմից իրականացված ներդրումների համար վարչական խոչընդոտների մասին ուսումնասիրությունը պարզեցին, որ պետական տեսչական ստուգումները զգալի խնդիրներ են հարուցում ձեռներեցների համար, ներառյալ՝ «իրենց գործունեության խանգարում, սանկցիաների ռիսկ և կոռուպցիա»:

Այս բիզնես միջավայրը փոխելու նպատակով, Նախարարների խորհուրդն ընդունեց գործողությունների ծրագիր, որը հաստատվեց 1999թ. մայիսին, և որի արդյունքում պետք է մշակվեր Տեսչության կատարելագործման համապարփակ ծրագիր: Այդպիսի ծրագրի վերահսկման և իրականացման համար Պետական բարեփոխումների նախարարի հրամանով 2000թ. ապրիլի 14-ին ստեղծվեց Տեսչությունների համակարգման խորհուրդ (ՏՀԽ), որի պարտականությունն էր կատարելագործել ստուգումների իրականացումը լատվիական կառավարության 22 տեսչությունների կողմից: Ապրիլի 18-ին ՏՀԽ-ի առաջին հանդիպման ժամանակ ընդունվեց Պետական տեսչությունների կատարելագործման ծրագիրը և ՏՀԽ-ն ձեռնամուխ եղավ գործողությունների ծրագրի մշակմանը: Ծրագրի գլխավոր բաղադրիչներն էին՝

- Կանոնակարգերի կիրարկում՝ բոլոր 22 տեսչությունների համար ներքին գործառնական կանոնների նախապատրաստման նպատակով.
- Ուսուցում տեսչությունների պետերի և տեսուչների համար.
- Մասնավոր հատվածին տեղեկատվության տրամադրում.
- Ստուգումների համար կատարողականի ցուցանիշների և ներքին վերահսկողության համակարգի ստեղծում և, որ ավելի կարևոր է
- տեսչությունների աշխատանքների համակարգում:

Առաջին գործողության կապակցությամբ, ՏՀԽ-ն օգնեց մշակել բոլոր պետական կառույցների կողմից ստուգումների իրականացման ներքին գործառնական կանոնակարգերը և գիտա-մեթոդաբանական ձեռնարկները: Այս կանոնակարգերը խիստ կարևոր էին միասնական ստուգման ընթացակարգի սահմանման համար և տեղեկատվության աղբյուր հանդիսացան ստուգվողների համար՝ տեսուչների իրավունքների և պարտականությունների սահմանների, ինչպես նաև տեղում իրականացվող ստուգումների կարգի առումով: Սա իր հերթին նպաստեց տեսուչների և ձեռներեցների միջև ստուգումների պաշտոնական կարգի շուրջ փոխըմբռնման հաստատմանը:

Բացի ձեռնարկի սույլ տրամադրումից, Տեսչությունների կատարելագործման ծրագիրն օգտագործեց արդեն գոյություն ունեցող քաղաքացիական ծառայության ընթացակարգերը դրանց հիման վրա հատկապես տեսուչների համար վերապատրաստման դասընթացների մշակման և միայն տեսչությունների համար դասընթացներ կազմակերպելու նպատակով. քաղաքացիական դասընթացները բավարարում էին նաև առանձին տեսչությունների ցանկությանը՝ ուսուցում իրականացնել իրենց մոտ: Դասընթացներ մշակվեցին տարբեր թեմաներով, սկսած այն բանից, թե ինչպես հաստատել ներքին ստուգումների համակարգ, մինչև ռիսկերի գնահատումը,

<sup>2</sup> Այս բաժնում մեծապես օգտագործվել են ՏՀԽ-ի 2004 թ. հաշվետվության տվյալները, «Օրինակի քննարկում. 1999-2003թթ. տեսչությունների բարեփոխումը Լատվիայում»

հաճախորդների համար տեղեկատվական նյութերի պատրաստումը և տեղեկատվական համակարգի ստեղծումը (Աշխատանքի տեսչությունը և հակահրդեհային փրկարար ծառայությունը ռազմավարական պլանավորման դասընթացների անցկացման համար հրավիրել էին նաև շվեդացի փորձագետ և օգտագործեցին այդ հնարավորությունը՝ մշակելու քառամյա ռազմավարական ծրագիր): Ընդհանուր առմամբ Տեսչությունների պետերի և տեսուչների վերապատրաստման ծրագրի շրջանակներում կազմակերպված սեմինարներին մասնակցեց 492 տեսուչ և պետ:

Տեսուչների վերապատրաստումը լրացվում էր հանրությանը տեսչությունների գործունեության, հիմնական խնդիրների, մատուցվող ծառայությունների, իրավունքների և պարտականությունների, օրենսդրությամբ հաստատված պահանջների և նոր փոփոխությունների ու հաճախորդների իրավունքների և պարտականությունների վերաբերյալ հարցերում ներգրավելու նպատակով տեղեկատվական ռազմավարությունների մշակմանն ուղղված ինտենսիվ ջանքերով: Տեսչություններն օգտագործեցին զանազան միջոցներ՝ տեղեկատվական թերթիկներ, իրենց գրասենյակներում տեղեկատվական տախտակներ, ինտերնետային կայքեր, հաճախորդների հետ հանդիպումներ, հեռախոսով կամ գրասենյակում տեղեկությունների տրամադրում: Որոշ տեսչություններ (Շինարարության պետական տեսչությունը, Շրջակա միջավայրի պետական տեսչությունը և Դեղագործական պետական տեսչությունը) կազմակերպեցին սեմինարներ, որոնց ժամանակ քննարկվեցին ընթացիկ հարցեր, նորմատիվ ակտերի պահանջները և տեսչության կողմից մոնիթորինգի ենթարկվող կամ հսկվող ոլորտին վերաբերող օրենսդրական փոփոխությունները:


Որակի վրա շեշտադրումը շարունակելու նպատակով ՏՀԽ-ն և միջազգային դոնորները յոթ տեսչության տրամադրեցին աջակցություն ներքին աուդիտի ստորաբաժանումներ հիմնելու գործում՝ ներքին վերահսկողության համակարգերի գնահատման և բարելավման առաջարկությունների ներկայացման նպատակով (կառավարությունում մյուս ինն տեսչություններում ստուգումներն իրականացվում էին հենց նախարարությունների ներքին վերահսկողության բաժինների կողմից): Ներքին աուդիտ իրականացնող տեսուչները մույնպես հանդես եկան տեսչական գործընթացների կատարելագործման վերաբերյալ մի շարք առաջարկություններով:

Ի վերջո, այս գործառնական հարցերի համակարգման հետ միասին, ՏՀԽ-ին վստահվել էր մի կարևորագույն հանձնարարություն՝ նպաստել «նման իրավասություններ» ունեցող տեսչությունների համակարգմանը՝ տեղեկատվության շրջանառության բարելավման նպատակով: ՏՀԽ-ի մանդատն այնքան կենտրոնացված չէր, որքան Ուզբեկստանի դեպքում՝ ստուգումների պլանավորումը դեռևս իրականացվում էր առանձին նախարարությունների կողմից, բյուջեի կազմումը մույնպես ապակենտրոնացված էր, ի տարբերություն Սլովենիայի: ՏՀԽ-ն նաև օգտագործում էր իր իշխանությունը որոշակի հարցերում առաջատար կամ իրավասու նախարարությունների մատնանշման համար: Օրինակ՝ որպես իր մանդատի մաս, ՏՀԽ-ն պետք է նաև կազմակերպեր համալիր ստուգումներ և համակարգեր դրանց իրականացումը: 2001թ. ընդունված «Արտադրական վնասվածքների ռիսկերի գնահատման և ռիսկերի նվազեցման միջոցառումների կարգի մասին» լրացուցիչ օրենքով պահանջվում էր իրականացնել վնասակար համարվող ոլորտների համալիր ստուգումներ; Բնապահպանության պետական տեսչությունը մատնանշվեց որպես առաջատար/համակարգող գործակալություն, որը ՏՀԽ-ի գլխավորությամբ պետք է համակարգեր պլանավորման գործընթացը: Այսպիսով, ՏՀԽ-ն շարունակում էր շարժվել կառավարության կողմից շեշտադրված ապակենտրոնացման կուրսով՝ առանց իր ձեռքում այդ իշխանությունը կենտրոնացնելու:

Այս վարչական փոփոխությունների և համաձայնեցված բարեփոխումների շնորհիվ ՏՀԽ-ն անառարկելի հաջողության հասավ Լատվիայում ձեռներեցների վրա դրված վարչական բեռի նվազեցման գործում, լատվիական ձեռնարկատերերի համար խնայելով ժամանակը (տես՝

Պատկեր 1-ը և 2-ը), ինչպես նաև օգնելով նրանց աշխատողների անվտանգության հարցում դրական արդյունքների հասնելու գործում. թեև շինարարության ոլորտում մահացու դեպքերի մակարդակը համառոտեն շարունակում է մնալ բարձր (հիմնականում շնորհիվ Ռ-ի գայում շինարարության տեմպերի աճի), ռիսկային ոլորտներում (հանքարդյունաբերություն, գյուղատնտեսություն և արտադրություն) ոչ մահացու վնասվածքների թիվը նվազել է:


Պատկեր 1 և 2  
Տարվա ընթացքում ստուգումների միջին թիվը և միջին տևողությունը, ժամերով



### Սլովենիա

Սլովենիան, ունենալով ամենաառաջադեմ անցումային երկրի կարգավիճակ, մասնագիտական անվտանգության և առողջության բնագավառում ձեռք էր բերել բավականին բարձր իրազեկության մակարդակ, իսկ բարձր ռիսկ պարունակող աշխատանքների ժամանակ անհատական պաշտպանական սարքավորումների օգտագործումը երկրում ընդունված ստանդարտ է: Սակայն Լատվիայի նման Սլովենիան էլ էր տառապում ոչ արդյունավետ, կոռումպացվածությամբ աչքի ընկնող տեսչական ստուգումների ռեժիմով: Ինչպես ցույց է տվել Համաշխարհային Բանկի 2002թ. հարցումը, հարցման ենթարկված բոլոր ընկերությունների 4.5%-ը պատասխանել է, որ ստիպված են կաշառք վճարել մասնագիտական անվտանգության և առողջության հարցերով պատասխանատուներին, նման ցուցանիշն է գրանցվել նաև հակահրդեհային անվտանգության, բնապահպանական և (հատկապես) շինարարական ստուգումների գծով: Ամբողջ համակարգը ձեռներեցների կողմից դիտվում էր որպես ավելի շուտ պետական գանձարանը կամ տեսուչների գրպանները լցնելու, քան թե անվտանգությունն ապահովելու միջոց: Ստուգումների ռեժիմի թերի կողմերը վերացրին Սլովենիայում անվտանգության և առողջության նորմերի լայն կիրառման առավելությունները՝ ոչ մահացու վնասվածքների մակարդակը անհավատալիորեն բարձր էր անգամ համեմատած այլ անցումային երկրների հետ (տես Պատկեր 3): Ավելին, վնասվածքների մակարդակը մնացել էր նույն սահմաններում կամ ավելի էր բարձրացել, քանի որ ստուգումները չէին կարողանում պաշտպանել սլովեն աշխատողներին:

Պատկեր 3 – ոչ մահացու վնասվածքների մակարդակը (յուրաքանչյուր 100,000 մարդու հաշվով) անցումային տնտեսություններում 1997-2006թթ.



Աղբյուրը՝ ԱՄԿ զբաղվածության վիճակագրության տվյալների բազա

Որպես տեսչության իրավասությունների համախմբման մաս, Սլովենիայի կառավարությունը 2002թ ընդունեց ստուգումների մասին նոր օրենք (Ukaz o razglasitvi zakona o inspecijskem nadzoru (ZIN)), որով հիմնվեց կենտրոնական խորհուրդ (տես՝ Հավելված 1<sup>3</sup>): Այս օրենքի 11-րդ հոդվածով Տեսչությունների խորհուրդը (ՏԽ) սահմանվում է որպես մշտական միջգերատեսչական մարմին՝ բաղկացած «գլխավոր տեսուչներից և տեսչական գրասենյակների տնօրեններից», որոնց պարտականությունն է համակարգել տեսչական ստուգումների ծրագրերը տարվա համար: Ուղղակատանի օրինակից առաջ անցնելով Սլովենիայի խորհուրդը նաև պատասխանատու է առանձին տարածքային տեսչությունների և մասնաճյուղերի բյուջեների կազմման, տեսչությունների կազմակերպական, տարածքային, ծախսային, ֆինանսական և վարչական հարցերի շուրջ որոշումների համակարգման համար:

Ստուգումների մասին օրենքը ոչ միայն ներառում է խորհրդի ստեղծումը, այլ նաև այն մշակվել է որպես իրավական փաստաթուղթ, որով կարգավորվում են սլովենական կառավարությունում բոլոր տեսուչների վերապատրաստման և վարվելակերպի հարցերը: Ստանդարտացնելով ստուգողների և ստուգվողների իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների մասին օրենքը մեծ քայլ էր դեպի երկրում ստուգումների որակի և ժամանակի հարցերում տարբերությունների նվազեցումը: Սակայն Ստուգումների մասին օրենքով առանձին տեսչությունները և դրանց կարգավորող օրենսդրական դաշտերը հիմնականում չփոփոխվեցին, քանի որ գործակալությունները, ինչպես օրինակ Աշխատանքի պետական տեսչությունը (ԱՊՏ) շարունակում էին գործել համաձայն 2000թ. ընդունված համապատասխան օրենքի, որով սահմանվել էին նրանց պարտականությունները:

Անշուշտ ՏԽ-ի գործողությունները և Ստուգումների մասին օրենքի կիրարկումն ավելի ապակենտրոնացված էին, քան նախատեսվել էր, քանի որ խորհրդի մշակած նախագծերը միտված էին ավելի շատ որոշակի ոլորտների կամ ռիսկերի հետ կապված հանձնախմբերի ստեղծմանը, քան թե տեսչությունների միջև ավելի լայն համագործակցությանը. ՏԽ կողմից 2002 թվականից ի վեր ստեղծված կառույցներից էին «Անվտանգության հաստատման տեսչական հանձնախումբը» և «Ոչ սննդային արտադրանքի շուկայի տեսչական հանձնախումբը», երկու

<sup>3</sup> Սլովենիայի Տեսչական ստուգումների մասին օրենքը ներկայացված է անգլերեն լեզվով

խումբ, որոնք մասնակիցներ էին ընդգրկում համապատասխան տեսչություններից և նպաստում էին տեղեկատվության փոխանակմանն իրենց հանդիպումների ընթացքում:

Տեսչությունների կողողինացման համակարգը Սլովենիայում գործեց չորս տարի, մինչև որ ՏԽ-ի պարտականությունները 2006թ.-ին փոխանցվեցին Հանրային վարչարարության նոր նախարարությանը, որն ավելի լայն և ավելի ուժեղ համակարգման գործառնություններ ունի կառավարությունում: Այս ավելի մեծ և անգամ ավելի պաշտոնական համախմբումն իրականացվեց ի պատասխան տեսչությունների համակարգման հետ կապված դեռևս առկա խնդիրների. անշուշտ, Սլովենիայի մարդու իրավունքների պաշտպանի 2005թ.-ի ամենամյա հաշվետվության մեջ ասվում էր, որ «տարբեր տեսչությունների միջև համակարգման բացակայությունը հաճախ հանգեցնում է վերջիններիս անգործությանը» (հաշվետվության մեջ նաև նշվում էր, որ չնայած «2002թ. կատարված առաջարկության, որով կառավարությանը կամ համապատասխան նախարարություններին կոչ էր արվում լուծել տարբեր տեսչությունների ոչ հստակ իրավասությունների հրատապ հարցն այն դեպքերում, երբ որոշակի գործողությունը հանգեցնում է օրենսդրության բազմակի խախտումների տարբեր ոլորտների տեսանկյունից, ...այդ ժամանակվանից ոչինչ չի փոխվել»):

Թեև Սլովենիան դեռևս երկար ճանապարհ պետք է անցնի երկրում աշխատողների անվտանգության բարելավման գործում (հատկապես գյուղատնտեսության ոլորտում), դրա կատարած աշխատանքը ՏԽ կողմից համակարգման, իսկ այժմ էլ Հանրային վարչարարության նախարարության ստեղծման գործում, օգնել է բարելավել անվտանգության գծով արդյունքներն ամբողջ երկրում: Իր գործունեության կարճ ժամանակամիջոցում ՏԽ-ն հզոր ազդեցություն է ունեցել կոռուպցիայի և անվտանգության հարցերի վրա, հատկապես նեղ տեխնիկական ոլորտներում, որտեղ համալիր ստուգումները կարող էին ամենամեծ արդյունավետությունն ունենալ: Օրինակ՝ հանքարդյունաբերության ոլորտում և քարհանքներում ոչ մահացու վնասվածքների թիվը նվազել է՝ 100,000 աշխատողի հաշվով 1997թ.-ի 17,000 վնասվածքի դիմաց 2006թ. եղել է 8,566, ամենամեծ նվազումը տեղի է ունեցել 2001-2002 թվականներին: Հանքարդյունաբերության մեջ մահացու վնասվածքների տոկոսը նույնպես նվազել է՝ 100,000 աշխատողի հաշվով 2000թ. 96.2-ից նվազել է մինչև 26 2006թ.: Տնտեսության կտրվածքով ոչ մահացու վնասվածքների թիվն արագ տեմպով ընկել է՝ 100,000 աշխատողի հաշվով 2001թ. 5,152.9-ից դարձել է 4,437 2006թ.-ին: Կոռուպցիան նույնպես կտրուկ նվազել է ՏԽ գործողությունների շնորհիվ՝ 2005թ. ընկերությունների միայն մոտավորապես 1%-ն է նշել, որ իրենց վրա զգացել են տեսուչներին (ցանկացած կարգի) կաշառք առաջարկելու ճնշում:

## ***Եզրակացություն***

Տեսչությունների բարեփոխումը մեծ օգուտ է առաջացնում ամբողջ կառավարության մակարդակով բարելավումների իրականացման գործում՝ համակարգման նպատակում փոքր ներդրում կատարելու դիմաց: Այս երկրների կողմից ընդունված մոտեցումները ցույց են տալիս, թե ինչպես է կարելի համակարգումն իրականացնել վարչական եղանակով, միաժամանակ պահպանելով ապակենտրոնացված համակարգերի միասնականությունը. հանրային վարչարարությունը լայն վերակառուցման ենթարկելու փոխարեն, այն երկրները, որոնք տեսչական ծառայությունները բաշխել են ամբողջ կառավարությունով, կարող են պահել այդ համակարգը, բայց մեղմացնել դրա վնասակար ազդեցությունները: Ավելին, նշված անցումային երկրներում համակարգման կատարելագործումն կարող է բարելավել առողջության և անվտանգության արդյունքները, միաժամանակ նվազեցնելով կոռուպցիայի հնարավորությունները:



Մույն փաստաթղթի մշակումը հնարավոր է դարձել Ամերիկյան ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության աջակցության շնորհիվ: Մույն փաստաթղթի մեջ արտահայտված տեսակետները պատկանում են հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության կամ ԱՄՆ Կառավարության տեսակետների հետ:

## **ՀԱՎԵԼՎԱԾ 1. Սլովենիայի տեսչական ստուգումների ակտը**

### **ՏԵՍՉԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԱԿՏ**

Տպագրված է Սլովենիայի Հանրապետության Պաշտոնական Տեղեկագրում, հունիս 28, 2002թ.

#### **Հայտարարություն.**

Ստորև ներկայացված տեքստի անգլերեն լեզվով թարգմանությունը տրամադրված է միայն տեղեկատվության նպատակներով և որևէ իրավունք չի շնորհում կամ պարտականություն չի սահմանում որևէ մեկի նկատմամբ: Բնօրինակ է համարվում միայն պաշտոնապես տպագրված Ակտը՝ Սլովակերեն լեզվով, ինչպես հրատարակված և հրապարակված է Սլովենիայի Հանրապետության Պաշտոնական Տեղեկագրում:

#### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

##### **Հոդված 1**

(Ակտի բովանդակությունը)

Սույն Ակտը կառավարում է ստուգումների ընդհանուր սկզբունքները, տեսչական գրասենյակների կազմակերպումը, տեսուչների պաշտոնները, իրավունքներն ու պարտականությունները, տեսուչների իրավասությունները, ստուգման ընթացակարգը, ստուգման միջոցառումները և ստուգումների հետ կապված այլ հարցեր:

##### **Հոդված 2**

(Ստուգում)

Ստուգումը վերահսկողություն է սահմանում օրենքների և այլ կանոնակարգերի իրականացման և դրանց պահանջների բավարարման նկատմամբ:

Ստուգումներն իրականացվում են արական և իգական սեռի տեսուչների կողմից (այսուհետ՝ տեսուչ), որպես պաշտոնյաներ ում լիազորված են հատուկ իրավասություններ և պատասխանատվություն:

##### **Հոդված 3**

(Ակտի շրջանակը)

Տեսչական գրասենյակների կառավարման համար գոյություն ունեն հատուկ Ակտեր, հետևաբար սույն Ակտը կանոնակարգում է այնպիսի հարցեր միայն, որոնք ընդգրկված չեն նման հատուկ Ակտերում:

Ընթացակարգային հարցերը, որոնք ընդգրկված չեն սույն Ակտում կամ նախորդ պարբերության մեջ նշված հատուկ Ակտերում, կանոնակարգվում են ընդհանուր վարչական ընթացակարգերը կառավարող Ակտով:

Սույն Ակտը, բացառությամբ կազմակերպմանը վերաբերող դրույթների (Հոդվածներ 8-11), կանոնակարգում է տեղական իշխանությունների կողմից իրականացվող ստուգումները, եթե տեղական ինքնակառավարման մասին Ակտով, կամ այլ Ակտով այլ բան նախատեսված չէ:

Սույն Ակտը չի կառավարում վարչական ստուգումները, բյուջետային ստուգումները, պաշտպանության ստուգումները և պետական և տեղական իշխանությունների ներքին վարչական վերահսկողության այլ տեսակները:

## II. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ

### Հոդված 4

(Անկախության սկզբունք)

Տեսուչները, իրենց իրավասության սահմաններում, անկախ են իրենց տեսչական պարտականությունները կատարելիս:

### Հոդված 5

(Պետական և մասնավոր շահերի պաշտպանության սկզբունք)

Տեսուչները տեսչական պարտականություններն իրականացնում են պետական շահերի և ֆիզիկական և իրավաբանական անձնանց շահերի պաշտպանության նպատակով:

### Հոդված 6

(Հրապարակայնության սկզբունք)

Տեսուչները հանրությանը տեղեկացնում են կատարված միջոցառումների և ստացված արդյունքների մասին, անհրաժեշտության դեպքում պաշտպանելու իրավաբանական և ֆիզիկական անձանց շահերը, և երբ անհրաժեշտ է, ապահովելու օրենքների, կանոնակարգերի կամ իրենց համապատասխան դրույթների պահանջների բավարարումը:

### Հոդված 7

(Համամասնության սկզբունք)

Տեսուչներն իրենց պարտականությունները կատարում են այնպես, որ իրավաբանական և ֆիզիկական անձնանց գործունեությանը միջամտեն միայն այն աստիճանով, որը բացարձակապես անհրաժեշտ է ստուգումներն արդյունավետ իրականացնելու համար:

Միջոցառումը որոշելիս, հաշվի առնելով խախտման լրջության աստիճանը, տեսուչը կիրառում է այնպիսի միջոցառում, որն ավելի շահավետ է պատասխանատու անձին, եթե դա հնարավորություն է տալիս հասնել հրահանգի նպատակին:

Թերությունները վերացնելու համար տրվող ժամանակահատվածը որոշելիս տեսուչը հաշվի է առնում խախտման լրջության աստիճանը, դրա ազդեցությունը պետական շահերին, ինչպես նաև այն հանգամանքները, որոնցից կախված է ժամանակահատվածը, որի ընթացքում ստուգման ենթարկվող իրավաբանական կամ ֆիզիկական անձը (այսուհետ՝ պատասխանատու անձ) կարող է պատշաճ կերպով վերացնել թերությունները:

## III. ԿԱԶՍԱԿԵՐՊՈՒՄ

### Հոդված 8

(Տեսչական գրասենյակների կազմակերպում)

Տեսուչները գործում են տեսչական գրասենյակներում, որոնք ստեղծվում են ըստ վարչական տարածքների:

Տեսչական գրասենյակները գործում են տեսչություններում, որոնք ունեն անկախ մարմնի կարգավիճակ՝ նախարարության պատասխանատվության ներքո: Այն դեպքում, երբ մեկ տեսչության մեջ գործում է մի քանի տեսչական գրասենյակ, ստեղծվում են համապատասխան ներքին կազմակերպչական բաժիններ:

Բացառության կարգով, եթե այդպես նախատեսված է հատուկ Ակտով կամ Կառավարության հրահանգով, տեսչական գրասենյակ կարող է ստեղծվել նախարարության ենթակայության տակ գտնվող մարմնի ներսում, որը տեսչություն չէ:

#### Հոդված 9

(Տեսչական գրասենյակի կառավարում)

Տեսչության արական կամ իգական սեռի պետը (այսուհետ՝ պետ) հանդիսանում է արական կամ իգական սեռի գլխավոր տեսուչ (այսուհետ՝ գլխավոր տեսուչ):

Այն դեպքում, երբ մեկ տեսչությունում ստեղծված է մի քանի տեսչական գրասենյակ, ապա յուրաքանչյուր տեսչական գրասենյակ ղեկավարում է արական կամ իգական սեռի տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

Եթե տեսչական գրասենյակը ստեղծված է նախարարության ենթակայության տակ գտնվող մարմնում, որը տեսչություն չէ, ապա տեսչական գրասենյակը ղեկավարում է տեսչական գրասենյակի տնօրենը:

#### Հոդված 10

(Տեսչական գրասենյակների գործունեության համակարգում)

Տարբեր տեսչական գրասենյակների գործունեությունը համակարգելու նպատակով ստեղծվում է Տեսչության Խորհուրդ, որպես մշտական գործող միջ-գերատեսչական մարմին:

Տեսչության Խորհրդի անդամներն են գլխավոր տեսուչները, տեսչական գրասենյակների տնօրենները և նախարարության ենթակայության այլ մարմինների ղեկավարները, որոնք լիազորված են իրականացնել ստուգումներ:

Այն ոլորտներում, որտեղ պահանջվում է մի քանի տեսչական գրասենյակների համակարգված գործունեություն, և երբ նման համակարգումը անհրաժեշտ է համարվում աշխատանքների արդյունավետությունը բարելավելու համար, Տեսչության Խորհուրդը համակարգում է տեսչական գրասենյակների աշխատանքային ծրագրերը, պլանավորում է տարբեր տեսչական գրասենյակների կողմից համակարգված ստուգումներին վերբերող պարտականությունների իրականացումը և առաջարկում է ստեղծել տեսուչների աշխատանքային խմբեր՝ առաջադրանքի համակարգված իրականացումը և գործունեության համակարգված մեթոդներ ապահովելու նպատակով: Տեսչության Խորհուրդը զբաղվում է նաև տեսչական գրասենյակների աշխատանքին վերաբերող ընդհանուր հարցերով և Կառավարությանը տեղեկացնում է այս ոլորտում կատարված իր աշխատանքների մասին: Տեսչության Խորհուրդը համակարգում է նաև տեսչությունների շրջանային բաժինների և մասնաճյուղային գրասենյակների կազմակերպչական, տարածքի, ծախսային, ֆինանսական և վարչական հարցերի լուծումը:

Տեսչության Խորհրդի գործունեությանը վերաբերող հարցերը կառավարվում են Ընթացակարգային Կանոններով, որը հաստատվում է Տեսչության Խորհրդի կողմից՝ Կառավարության համաձայնությամբ:

### **IV. ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՊԱՇՏՈՆԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### Հոդված 12

(Տեսչական պարտականություններ իրականացելու պայմաններ)

Եթե այլապես սահմանված չէ տվյալ մասնակի տեսչական գրասենյակը կանոնակարգող հրահանգներով, ապա անձը, որը.

- ունի բարձրագույն կրթություն կամ բարձր որակավորման աստիճան;
- ունի հինգ տարվա աշխատանքային փորձ;

– հանձնել է տեսուչի մասնագիտական քննություն կարող է նշանակվել տեսուչ:

Չնայած վերը նշված պարբերության դրույթներին, անձը, որը չի հանձնել տեսուչի մասնագիտական քննություն, կարող է նշանակվել տեսուչ, եթե հանձնել է վարչական ընթացակարգերի վերաբերյալ մասնագիտական քննություն:

Նախորդ պարբերությունում նշված տեսուչը, նշանակվելուց հետո մեկ տարվա ընթացքում հանձնում է տեսուչի մասնագիտական քննություն:

Տեսուչը, որը չի հանձնել տեսուչի մասնագիտական քննություն, չի կարող ընդունել որոշումներ, սակայն իրավասու է իրականացնել աշխատանքներ, որոնք նախորդում են որոշման կայացմանը:

Տեսուչը, իր պարտականություններն իրականացնելու համար, պարբերաբար ստանում է ուսուցում / վերապատրաստում, գլխավոր տեսուչի կամ տեսչական գրասենյակի տնօրենի կողմից կազմված ծրագրին համաձայն:

#### Հոդված 13

(գրասենյակից հեռացում՝ տեսուչի մասնագիտական քննությունը չհանձնելու դեպքում)

Տեսուչը հեռացվում է գրասենյակից, եթե նա, իրենից կախված պատճառներով, սահմանված ժամկետում չի հանձնում տեսուչի մասնագիտական քննությունը:

Հեռացման հետևանքները կանոնակարգվում են պետական մարմինների աշխատանքային հարաբերությունները կանոնակարգող Ակտի դրույթներով, որոնք վերաբերում են աշխատանքի համար անձի ոչ համապատասխանությանը:

Տեսուչը նաև հեռացվում է սույն Հոդվածի դրույթներին համաձայն, եթե նա, իր մեղքով, ուսուցում / վերապատրաստում չի ստանում ըստ համապատասխան ծրագրի:

#### Հոդված 14

(Տեսուչի պաշտոնի ապահովվածություն)

Տեսուչը, աշխատանքի կազմակերպման նպատակներով, առանց իր համաձայնության չի կարող տեղափոխվել մեկ այլ պաշտոնի, որը տեսչական իրավասություններ չի իրականացնում:

#### Հոդված 15

(Այլ աշխատանքների սահմանափակում)

Այն ոլորտում, որտեղ տեսուչն իրականացնում է տեսչական պարտականություններ, տեսուչը չի կարող աշխատել այլ գործատուների մոտ, բացառությամբ գիտական կամ մանակավարժական նպատակներով աշխատանքը:

#### Հոդված 16

(Գործնական գաղտնիքների, այլ գաղտնիքների և աղբյուրների պաշտպանություն)

Տեսուչը պահպանում է տեսչական պարտականություններն իրականացնելիս իրեն հայտնի դարձած գաղտնիքները: Այս պարտականությունն ուժի մեջ է մնում նույնիսկ, երբ դադարում են տեսուչի աշխատանքային հարաբերությունները:

Տեսուչը գաղտնի է պահում բողոքի կամ տեղեկատվության աղբյուրը, որի հիման վրա իրականացվում է ստուգումը:

#### Հոդված 17

(Տեսուչների հատուկ պատասխանատվություններ)

Տեսուչը հատուկ պատասխանատվություն է կրում, երբ.

- տեսչական պարտականություններն իրականացնելիս չի իրականացնում իր պարտականությունները կամ օրենքով պահանջվող համապատասխան միջոցառումներ չի նախաձեռնում;
- տեսչական պարտականություններն իրականացնելիս հայտնաբերած օրենքի կամ այլ հրահանգների խախտումների մասին հաշվետվություն չի ներկայացնում կամ չի տեղեկացնում իրավարար մարմիններին;
- զբաղվում է սույն Ակտի Հոդված 15-ում ներկայացված գործունեության կամ աշխատանքի տեսակներով:

Վերը նշված պարտականություններից յուրաքանչյուրի խախտումը համարվում է կարգապահական լուրջ խախտում:

Այն տեսուչը, որի նկատմամբ կարգապահական լուրջ խախտման հետևանքով կարգապահական միջոց է կիրառվում, մինչև կարգապահական պատասխանատվության մասին վերջնական որոշումը, չի կարող իրականացնել տեսչական պարտականություններ:

## V. ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 18

(Տեսչական պարտականությունների իրականացում)

Տեսուչը ինքնուրույն իրականացնում է տեսչական պարտականություններ, իրականացնում է վարչական վարույթներ և կայացնում է ընթացիկ և ընթացակարգային որոշումներ վարչական վարույթներում:

Տեսչական պարտականություններ իրականացնելու իրավասությունը ներկայացվում է ծառայության քարտով և կրծքանշանով: Ծառայության քարտը և կրծքանշանը տրվում են տվյալ ոլորտի (որտեղ գործում է տեսչական գրասենյակը) համար պատասխանատու նախարարի կողմից, պետական կառավարման համար պատասխանատու նախարարի համաձայնությամբ:

Ծառայության քարտերի և կրծքանշանների ձևը, ինչպես նաև դրանց տրման ընթացակարգը սահմանվում է պետական կառավարման համար պատասխանատու նախարարի կողմից, եթե այլ բան նախատեսված չէ հատուկ Ակտում:

Հոդված 19

(Տեսուչի իրավասությունները)

Ֆիզիկական կամ իրավաբանական անձանց մոտ տեսչական պարտականություններ իրականացնելիս տեսուչն իրավունք ունի.

- ուսումնասիրել տարածքը, շենքերը, միացումները, սարքերն ու սարքավորումները, շրջապատը, օբյեկտներ, ապրանքներ, նյութեր, մատյաններ, պայմանագրեր, նամակներ և այլ փաստաթղթեր, ինչպես նաև պետական մարմինների, առևտրային կազմակերպությունների, հաստատությունների, այլ կազմակերպությունների, ասոցիացիաների և մասնավոր անձանց գործունեությունն ու փաստաթղթերը;
- ուսումնասիրել մատյանները, պայմանագրերը, նամակները և այլ փաստաթղթերը, ինչպես նաև գործունեությունն ու փաստաթղթերը, երբ դրանք գրանցված են էլեկտրոնային կրիչների վրա, և պահանջել դրանց գրավոր տարբերակը, որը պետք է հավաստի էլեկտրոնային տարբերակի հավաստիությունը;
- հարցաքննել կողմերին և վկաներին վարչական վարույթների դեպքում
- ուսումնասիրել մարդկանց անձը հաստատող փաստաթղթերը;

- պաշտոնական հաշվառման և այլ տվյալների բազաներից անվճար ստանալ և օգտագործել պատասխանատու անձին վերաբերող և ստուգման իրականացման համար անհրաժեշտ անձնական և այլ տվյալներ;
- անվճար ստանալ ապրանքների նմուշներ և իրականացնել ստացված նմուշների ուսումնասիրություն;
- ուսումնասիրության նպատակներով անվճար ստանալ նյութերի և սարքավորումների նմուշներ;
- լուսանկարել կամ այլ միջոցներով նկարահանել անձի, տարածքի, միացումների, շրջապատի, և առաջին պարբերությունում նշված այլ օբյեկտների վիզուալ տվյալները;
- բազմացնել փաստաթղթերը, աուդիո-վիդեո տեսագրությունները և այլ փաստերը;
- փաստերի պաշտպանության նպատակով առգրավել առարկաներ, փաստաթղթեր և նմուշներ
- ստուգման նպատակներին համապատասխան իրականացնել այլ պարտականություններ:

Տեսչական պարտականություններ կատարելիս տեսուչն իրավասու է դեպքի վերաբերյալ փաստեր գտնելու նպատակով առգրավել փաստաթղթեր՝ առավելագույնը 15 օր ժամկետով, եթե նա համարում է, որ օրենքի կամ այլ հրահանգների խախտման իրատեսական կասկածներ կան, և եթե նման քայլը չի խաթարում ֆիզիկական կամ իրավաբանական անձի գործունեությունը: Փաստաթղթեր առգրավելու դեպքում տեսուչը կազմում է համապատասխան տեղեկանք: Տեսուչը չի առգրավում պետական մարմինների այնպիսի տեղեկատվություն, որը դասակարգված է որպես գաղտնի:

Կառավարությունն իրավասու է ընդունել կանոնակարգ, որը ավելի մանրամասն սահմանում է տեսուչների իրավասությունների իրականացումը:

#### Հոդված 20

(Մուտքը տարածք, շենքեր և պատասխանատու անձի սարքավորումներ)

Տեսուչն իրավունք ունի առանց պատասխանատու անձին կամ նրա լիազոր ներկայացուցչին նախորոք տեղեկացնելու կամ առանց վերջիններիս թույլտվության, անկախ աշխատանքային ժամից, մուտք գործել տարածք, շենքեր և նախորդ Հոդվածում սահմանված սարքավորումներ և սարքեր, եթե այլապես սահմանված չէ օրենքով:

Պատասխանատու անձը կարող է մերժել տեսուչի մուտքը բնակելի տարածք, եթե տեսուչը չի ներկայացնում համապատասխան դատարանի հրաման:

Այն դեպքում, երբ պատասխանատու անձը, առանց իրավական հիմքերի, (սույն Հոդվածի առաջին պարբերություն) մերժում է տեսուչի մուտքը տարածք կամ շենք, որտեղ իրականացվում է գործունեությունը, տեսուչն իրավունք ունի ոստիկանության օգնությամբ մուտք գործել տարածք կամ շենք, անկախ պատասխանատու անձի կամքից: Նման դեպքում մուտքի համար կատարված ծախսերը, ինչպես նաև անխուսափելի վնասների ծախսերը կրում է պատասխանատու անձը:

#### Հոդված 21

(Պատասխանատու անձին չպատկանող բիզնես կամ տարածք)

Անհրաժեշտ է ստանալ այլ բիզնեսի, արտադրության կամ այլ տարածքների կամ հողի սեփականատիրոջ կամ դրանք տնօրինող անձանց թույլտվությունը՝ տվյալ տարածքում ստուգում իրականացնելու համար, եթե ստուգման ընթացքում ծագել է նման անհրաժեշտություն, քանի որ իրատեսական կասկածներ կան, որ պատասխանատու անձը գործունեություն է իրականացնում այդ տարածքում, կամ այդ տարածքում կան պատասխանատու անձին պատկանող առարկաներ, որոնք ենթակա են ստուգման:

Նախորդ պարբերությունում նշված անձը կարող է մերժել ստուգումը հետևյալ դեպքերում,.

- եթե խնդրո առարկա տարածքը բնակելի տարածք է, և տեսուչը չի ներկայացնում համապատասխան դատարանի որոշում;
- եթե ստուգումը անձին կհասցնի լուրջ վնաս, կհանգեցնի ֆինանսական կամ նյութական պարտավորության կամ տույժի;
- եթե ստուգումը կհանգեցնի գործնական, մասնագիտական, արվեստի կամ գիտական գաղտնիքների պահպանման պարտականության խախտման;
- կամ այլ դեպքերում, երբ ստուգումը կհանգեցնի այնպիսի գաղտնիքի պահպանման խախտմանը, ինչպիսիք են գաղտնիքները, որոնք անձը իմացել է որպես եկեղացական, փաստաբան, բժիշկ կամ այլ մասնագետ:

Եթե սույն Հոդվածի առաջին պարբերությունում նշված անձը, առանց իրավական հիմքի, մերժում է ստուգման իրականացումը, ապա նման անձի նկատմամբ կարող են կիրառվել վկայություն չտվող վկաների համար սահմանված միջոցառումները: Եթե անձը շարունակում է մերժել ստուգումը, ապա ստուգումը կարող է իրականացվել նման անձի կամքին հակառակ:

Եթե սույն Հոդվածի առաջին պարբերությունում նշված անձը, առանց իրավական հիմքի, մերժում է ստուգման իրականացումը և այդ անձի գտնվելու վայրն անհայտ է, և վտանգ կա, որ նախքան ստուգման իրականացումը սույն Հոդվածի առաջին պարբերությունում նշված փաստերը, որոնք ենթադրաբար գտնվում են տարածքում, կարող են ոչնչացվել կամ տեղափոխվել, ապա տեսուչն իրավասու է կնքել այդ տարածքը մինչև ստուգման իրականացումը, սակայն առավելագույնը 7 օր ժամկետով, կամ մինչև հնարավորինս շուտ կգտնվի անձը: Այս կապակցությամբ տեսուչը կայացնում է հատուկ ընթակարգային որոշում:

#### Հոդված 22

(Պատասխանատու անձի բնակելի տարածքի ստուգում)

Եթե անհրաժեշտ է, որ տեսուչը, տեսչական պարտականություններն իրականացնելիս, ստուգի բնակելի տարածքներ, և սեփականատերը կամ օգտագործողը դեմ են նման ստուգումների, ապա ստուգումն իրականացնելու համար տեսուչը պետք է ստանա համապատասխան դատարանի հրաման:

Դատարանը թույլատրում է նախորդ պարբերությունում նշված տարածքի ստուգումը, եթե իրատեսական կասկած կա, որ.

- բնակելի տարածքում իրականացվում է անօրինական գործունեություն;
- բնակելի տարածքում, որոշակի կանոնակարգերի խախտումով, իրականացվում է գործունեություն;
- բնակելի տարածքներին վերաբերող կանոնակարգերի խախտումով պահվում են ապրանքներ, կենդանիներ կամ այլ առարկաներ
- կհայտնաբերվեն այլ խախտումներ բնակելի տարածքի կամ այդ տարածքում գտնվող առարկաների ստուգման արդյունքում.

Նախորդ պարբերության դրույթներին համաձայն բնակելի տարածքի ստուգում իրականացնելիս, իրավաբանական տարիքի երկու անձ պետք է ներկա լինեն, որպես վկա: Բնակելի տարածքի ստուգումը սահմանափակվում է բնակելի տարածքի այն մասով, որն անհրաժեշտ է ստուգել՝ ստուգման նպատակը ավարտին հասցնելու համար:

#### Հոդված 23

(Տեսչական պարտականությունների սահուն իրականացում)

Պատասխանատու անձը պետք է նպաստի, որպեսզի տեսուչը սահուն կերպով իրականացնի տեսչական պարտավորությունները:

Այն դեպքում, երբ տեսչական պարտականությունները կատարելիս տեսուչը հանդիպում է ֆիզիկական դիմադրության, կամ եթե նման դիմադրություն ակնկալվում է, ապա տեսուչը կարող է դիմել ոստիկանության օգնությանը:

Ոստիկանությունը աջակցություն է տրամադրում, համաձայն ոստիկանության գործողությունները կառավարող Ակտի:

## **VI. ՏԵՍՉԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐ**

### **Հոդված 24**

(Վարույթի կողմերը)

Տեսուչը քննության է առնում հաշվետվություններ, բողոքներ, հաղորդագրություններ և իր լիազորությունների սահմաններում այլ փաստաթղթեր, և դիմողներին՝ վերջիններիս պահանջով, տեղեկացնում է նախաձեռնվող միջոցառումների մասին:

Չնայած ընդհանուր վարչական ընթացակարգերը կառավարող Ակտի դրույթներին, տեսուչը քննության է առնում անանուն հաշվետվությունները, եթե առկա չեն պայմաններ, որոնք կասկած են հարուցում նման հաշվետվությունների հավաստիության կամ լրջության վերաբերյալ:

Տեսուչի կողմից իրականացվող վարույթի համար պատասխանատու անձը համարվում է վարույթի կողմ: Արական կամ իգական սեռի դիմողը (այսուհետ՝ դիմող), որը ներկայացրել է միջնորդությունը, հաշվետվությունը, հաղորդագրությունը կամ այլ հայտ, չի համարվում վարույթի կողմ:

### **Հոդված 25**

(վարույթի ընթացքում գործողությունների իրավասություններ)

Վարույթի ընթացքում, նախքան ստուգման գործի վերաբերյալ որոշման կայացումը, որոշակի գործողություններ, մասնավորապես որոշմանը առընչվող փաստերի և պայմանների հայտնաբերում, կարող են իրականացվել տեսչական գրասենյակի այլ աշխատողների կողմից՝ գլխավոր տեսուչի գրավոր լիազորմամբ:

Նախորդ պարբերությունում նշված աշխատողները չունեն տեսուչի իրավասություններ և չեն կարող ընթացակարգային կամ այլ որոշում կայացնել, որը կդադարեցնի վարույթը:

### **Հոդված 26**

(Մասնագիտական առաջադրանք ստուգման գործում)

Ստուգման գործում մասնագիտական առաջադրանքներ կարող են իրականացվել մասնագիտացված կազմակերպությունների, հաստատությունների կամ անհատների կողմից, եթե դա չի հակասում պետական շահերին կամ վարույթի մասնակիցների շահերին:

### **Հոդված 27**

(Վարույթն իրականացնելու իրավասությունների դադարեցում)

Գլխավոր տեսուչը կարող է դադարեցնել ընթացքում գտնվող վարույթն իրականացնող տեսուչի իրավասությունները և գործը հանձնել մեկ այլ տեսուչի կամ ինքը՝ գլխավոր տեսուչը կարող է շարունակել վարույթը, միայն եթե.

- առկա են խնդրահարույց հիմքեր, համաձայն ընդհանուր վարչական ընթացակարգերը կառավարող Ակտի, կամ
- տեսուչի նկատմամբ կիրառվում են կարգապահական տույժեր:

### **Հոդված 28**

(Վարույթի կասեցում)

Եթե ստուգման վարույթի ընթացքում պարզվում է, որ պատասխանատու անձը չի խախտել օրենքներն ու այլ հրահանգները, ապա տեսուչը ընթացակարգային որոշմամբ կասեցնում է վարույթը: Նման որոշման հիմնավորման մեջ ներկայացվում են կատարված ստուգման աշխատանքները և վարույթը կասեցնելու պատճառները:

Եթե կայացվում է որոշում, որով պատասխանատու անձի նկատմամբ սահմանվում են նաև որոշակի միջոցառումներ, ապա այդ որոշման հիմնավորման մեջ ներկայացվում են կատարված ստուգման աշխատանքները և ստուգումների այն մասը, որով խախտումներ չեն արձանագրվել:

#### Հոդված 29

(Ստուգման վարույթի ընթացքում պատասխանատու անձի իրավունքներն ու պարտականությունները)

Ստուգման մասին կարող է հայտարարվել նախորդ: Պատասխանատու անձը, նրա արական կամ իգական սեռի օրինական ներկայացուցիչը կամ կանոնադրության հոդվածներով սահմանված ներկայացուցիչը (այսուհետ՝ օրինական ներկայացուցիչ), կամ պատասխանատու անձի արական կամ իգական սեռի լիազոր ներկայացուցիչը (այսուհետ՝ լիազոր ներկայացուցիչ) և պատասխանատու անձի վերադասը կարող են ներկա գտնվել ստուգումների իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ տեսուչը համարում է, որ վերոհիշյալ անձանց ներկայությունը կարող է բացասաբար ազդել ստուգման արդյունավետությանը. նման դեպքերում տեսուչը կազմում է հատուկ ընթացակարգային որոշում:

Պատասխանատու անձի վերադասը, տեսուչի պահանջով և այդ պահանջում սահմանված ժամկետում ստուգման ենթարկվող գործի վերաբերյալ տրամադրում է գրավոր բացատրություն:

Այն դեպքում, երբ պատասխանատու անձը արական կամ իգական սեռի անհատ սեփականատեր է (այսուհետ՝ անհատ սեփականատեր) կամ իրավաբանական անձ, և անհատ սեփականատերը կամ օրինական ներկայացուցիչը կամ կանոնադրության հոդվածներով սահմանված ներկայացուցիչը, կամ պատասխանատու անձի լիազոր ներկայացուցիչը ստուգման վարույթին ներկա չեն, ապա տեսուչը կարող է վարույթի ընթացում իրականացնել բոլոր գործողությունները և դիտարկել բոլոր փաստերը առանց վերոհիշյալ անձանց ներկայության անհրաժեշտության:

Եթե քննարկման առարկան անհապաղ և անհետաձգելի հարցեր չեն, ապա նախորդ պարբերությունում սահմանված դեպքում, տեսուչը նախքան որոշում կայացնելը, պատասխանատու անձին ուղարկում է արձանագրություն և պահանջագիր, որով պատասխանատու անձից պահանջում է սահմանված ժամկետում (առնվազն 48 ժամվա ընթացքում) ներկայացնել գրավոր կամ բանավոր պարզաբանումներ հայտնաբերված փաստերի և հանգամանքների վերաբերյալ: Նման պահանջագիրը պատասխանատու անձին է ներկայացվում պատասխանատու անձի աշխատողի միջոցով, կամ եթե դա հնարավոր չէ, ապա թողնվում է տարածքում: Պահանջագրում սահմանված ժամկետի լրանալուց հետո տեսուչը կայացնում է որոշում, առանց մյուս կողմին լրացուցիչ տեղեկացնելով այդ մասին:

Այն դեպքում, երբ տեսուչը պատասխանատու անձին կարգադրել է որոշակի ժամանակահատվածում վերացնել տեղ գտած թերությունները, պատասխանատու անձը թերությունները վերացնելուց հետո անհապաղ պետք է տեղեկացնի տեսուչին:

#### Հոդված 30

(Տեսուչի որոշման բողոքարկում)

Տեսուչի կողմից կայացրած որոշման դեմ բողոքարկման հայտը չի կասեցնում որոշման կիրարկումը, եթե այլ բան նախատեսված չէ հատուկ Ակտով:

#### Հոդված 31

(Ստուգման վարույթի ծախսերը)

Ստուգման վարույթի այն աշխատանքների ծախսերը, որոնք կարևոր են եղել օրենքների կամ այլ հրահանգների խախտումները հավաստող փաստերի հայտնաբերման համար, վճարվում են պատասխանատու անձի կողմից:

Եթե ստուգման վարույթը դադարեցվում է համաձայն սույն Ակտի Հոդված 28-ի առաջին պարբերության, ապա ստուգման վարույթի ծախսերը կրում է տեսչական մարմինը: Տեսչական մարմինը վճարում է նաև ստուգման վարույթի ընթացքում այն գործողությունների կամ առաջադրանքների ծախսերը, որոնց արդյունքում թերություններ և խախտումներ չեն արձանագրվել:

Եթե ստուգման վարույթը իրականացվել է կեղծ հաշվետվության հիման վրա, ապա նախորդ պարբերությունում նշված աշխատանքների ծախսերը կրում է դիմողը, որը ներկայացրել է կեղծ հաշվետվություն:

## **VII. ՏԵՍՈՒՉՆԵՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ**

Հոդված 32

(Տեսուչների միջոցառումները)

Այն դեպքերում, երբ տեսչական պարտականություններն իրականացնելիս տեսուչը հայտնաբերում է, որ իր վերահսկողության տակ գտնվող օրենքը կամ այլ հրահանգ կամ ակտ խախտված է, ապա տեսուչը իրավունք ունի և պարտավոր է.

- կարգադրել միջոցառումներ, որոնք պետք է իրականացվեն հայտնաբերված թերությունները և խախտումները վերացնելու նպատակով, և սահմանել այդ միջոցառումների իրականացման ժամանակահատված;
- իրականացնել Խախտումների մասին Ակտով սահմանված ընթացակարգերը;
- ներկայացնել քրեական բողոք քրեական խախտման դեպքում;
- առաջարկել համապատասխան իրավասու մարմնին ձեռնարկել համախառնախան միջոցներ;
- կարգադրել այլ միջոցառումներ և իրականացնել այլ գործողություններ, որոնք օրենքի և այլ իրավական ակտների սահմաններում իր իրավասության շրջանակներում են:

Այն դեպքում, երբ տեսուչը հայտնաբերում է, որ պատասխանատու անձը խախտման կամ քրեական խախտման միջոցով ձեռք է բերել ֆինանսական կամ նյութական օգուտ, ապա տեսուչն առաջարկ է ներկայացնում համապատասխան իրավասու մարմնին առգրավելու նման օգուտները:

Այն դեպքում, երբ տեսչական պարտականություններն իրականացնելիս տեսուչը հայտնաբերում է օրենքի կամ այլ հրահանգի կամ ակտի խախտում, որոնց վերահսկողությունն իրականացվում է մեկ այլ տեսչական գրասենյակի կողմից, ապա տեսուչը սահմանում է փաստերը և կազմում է հաշվետվություն, որը իր կողմից առաջարկվող միջոցառումների հետ ներկայացնում է համապատասխան իրավասու տեսչական գրասենյակ:

Հոդված 33

(Տեսուչների կանխարգելիչ միջոցառումները և նախազգուշացումները)

Տեսչական գրասենյակը կանխարգելման նպատակներով իրականացնում է հետևյալ գործառնությունները.

- գրավոր պատասխանում է տեսչական գրասենյակի գործունեությանը վերաբերող՝ անհատների, ձեռնարկությունների և հաստատությունների կողմից կատարված հարցումներին;

- զանգվածային լրատվական միջոցներով տեղեկացնում է հանրությանը հայտնաբերված թերությունների և օրենքների և հրահանգների խախտումների հետևանքների մասին;
- այլ միջոցներով տեղեկատվություն է տրամադրում հանրությանը:

Եթե տեսչական պարտականություններն իրականացնելիս տեսուչը հայտնաբերում է որևէ թերություն և, հաշվի առնելով խախտման նշանակությունը, համարում է, որ նախազգուշացումը բավարար միջոց է, ապա տեսուչն իրավունք ունի բանավոր նախազգուշացում անել թերությունների և դրանց հետևանքների մասին և սահմանել թերությունների վերացման համար որոշակի ժամանակահատված:

Հայտնաբերված փաստերը, կատարված նախազգուշացումը և թերությունների վերացման համար սահմանված ժամանակահատվածը ամրագրվում են արձանագրությամբ: Եթե սահմանված ժամանակահատվածում թերությունները չեն վերացվում, տեսուչը կիրառում է այլ միջոցառումներ, ինչպես սահմանված է օրենքով:

#### Հոդված 34

(Տեսուչների հատուկ միջոցառումներ)

Եթե պատասխանատու անձը տեսուչի կողմից սահմանված ժամկետում չի վերացնում հայտնաբերված խախտումները և թերությունները, տեսուչը կարող է ընդունել որոշում ժամանակավորապես արգելել պատասխանատու անձի գործունեությունը կամ առգրավել պատասխանատու անձի կողմից խախտումների համար օգտագործվող կամ խախտումների արդյունքում ստացված օբյեկտները կամ փաստաթղթերը, մինչև համապատասխան իրավասու մարմնի կողմից որոշման կայացումը:

Տեսուչը, առանց խախտումները վերացնելու համար ժամանակահատված սահմանելու, ժամանակավորապես արգելում է պատասխանատու անձի գործունեությունը կամ առգրավում է պատասխանատու անձի կողմից խախտումների համար օգտագործվող կամ խախտումների արդյունքում ստացված օբյեկտները կամ փաստաթղթերը, մինչև համապատասխան իրավասու մարմնի կողմից որոշման կայացումը, այն դեպքերում, երբ դա անհրաժեշտ է կանխելու մարդկանց կամ կենդանիների կյանքի կամ առողջության վտանգը կամ միջավայրին կամ ունեցվածքին սպառնացող վնասը:

Տեսուչը կարող է նաև ընդունել որոշում ժամանակավորապես առգրավել պատասխանատու անձի կողմից խախտումների համար օգտագործվող կամ խախտումների արդյունքում ստացված օբյեկտները կամ փաստաթղթերը, եթե նա համարում է, որ պատասխանատու անձը կրկնում է խախտումները, հաշվի չառնելով ընդունված որոշումը:

Սույն Հոդվածի առաջին, երկրորդ և երրորդ պարբերություններում նշված դեպքերում տեսուչը անհապաղ վարույթը ներկայացնում է համապատասխան իրավասու մարմնին:

#### Հոդված 35

(Գործունեության արգելմանը վերաբերող միջոցառումներ)

Նախորդ Հոդվածի առաջին և երկրորդ պարբերություններին համաձայն գործունեությունը արգելելու դեպքում տեսուչն իրավունք ունի կարգադրելու կնքել արտադրության կամ գործարարության տարածքները կամ այլ տարածքները, ուր գործունեություն է իրականացվում, կամ գործունեությունն իրականացնելու համար օգտագործվող սարքերն ու սարքավորումները:

Այն դեպքում, երբ պատասխանատու անձը չի ենթարկվում նախորդ Հոդվածի առաջին և երկրորդ պարբերություններին համաձայն գործունեությունը արգելող որոշմանը, տեսուչը կարող է որոշում ընդունել կարգադրելու պատասխանատու անձին էլեկտրաէներգիա, ջուր, գազ կամ հեռահաղորդակցման միացումներ մատակարարող ձեռնարկություններին 3 օրվա ընթացքում

դադարեցնել համապատասխան մատակարարումները: Այս միջոցառումն իրականացվում է այնպես, որ ուղղակի վնաս չհասցվի սարքավորումներին կամ ապրանքներին: Նման որոշումը ներկայացվում է նաև պատասխանատու անձին:

Սույն Հոդվածի առաջին պարբերությունում նշված որոշման մեջ նախագուշացվում է, որ որոշմանը չենթարկվելու դեպքում կկիրառվեն սույն Հոդվածի երկրորդ պարբերությունում նշված միջոցառումները:

Այն դեպքում, երբ տեսուչը թերություններ կամ խախտումներ է հայտնաբերում և որոշմամբ որոշակի միջոցառումներ է կարգադրում, երրորդ կողմ հանդիսացող անհատ սեփականատերերը կամ առևտրային կազմակերպությունները չպետք է որևէ առաջադրանք կատարեն պատասխանատու անձի համար, որը նպաստում է խախտման շարունակությանը կամ հակասում է կարգադրված միջոցառմանը, ապահովելով, որ երրորդ կողմը տեղյակ է կամ, ըստ հանգամանքների պետք է տեղյակ լինի կարգադրված միջոցառումների մասին: Տեսուչը պատասխանատու է ապահովելու, որ երրորդ կողմը պատշաճ կերպով տեղեկացվի հայտնաբերված թերությունների կամ խախտումների մասին:

#### Հոդված 36

(Ապահովության միջոցառումներ՝ երրորդ անձանց իրավունքները պաշտպանելու համար)

Այն դեպքում, երբ տեսչական պարտականություններն իրականացնելիս տեսուչը հայտնաբերում է, որ պատասխանատու անձի կողմից օրենքի կամ այլ հրահանգի կամ ակտի խախտումը բխվում է այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձի իրավունքների կամ օրինական շահերի հետ, տեսուչը, նման անձանց պահանջով, վերջիններիս ներկայացնում է հայտնաբերված խախտումները, կարգադրված միջոցառումները և այլ համապատասխան տեղեկատվություն՝ նման անձանց իրավունքները պաշտպանելու նպատակով:

Եթե տեսուչը համարում է, որ երրորդ անձանց իրավունքները պաշտպանելու նպատակով անհրաժեշտ է հրապարակել իր որոշումը կամ դրա ամփոփ տարբերակը, կարող է այն հրապարակել կամ կարգադրել, որ հրապարակվի՝ որոշակի ժամկետով տեղադրելով այն պատասխանատու անձի գործունեության տարածքում, այդ տարածքի մուտքին, հրապարակել զանգվածային լրատվական միջոցներով կամ այլ համապատասխան եղանակով: Հրապարակման ծախսերը կրում է պատասխանատու անձը:

### VIII. ՎՆԱՍՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

#### Հոդված 37

(Պետության պատասխանատվություն վնասների դեպքում)

Տեսչական պարտականություններն իրականացնելիս տեսուչի անօրինական գործողության կամ սխալմունքի պատճառով պատասխանատու անձին կամ այլ անձանց հասցված վնասի համար պատասխանատու է Սլովենիայի Հանրապետությունը:

Նախորդ պարբերությունում նշված դեպքում Սլովենիայի Հանրապետությունը ռեգրեսսիոն հայտ է ներկայացնում ընդդեմ տեսուչի, եթե վնասները պատճառվել են միտումնավոր կամ ծայրահեղ անփութության հետևանքով:

Պատասխանատու անձը կամ երրորդ կողմը կարող են վնասի փոխհատուցում պահանջել անմիջապես տեսուչից միայն այն դեպքում, երբ վնասները հասցվել են տեսուչի կողմից քրեական խախտումների հետևանքով:

## **IX. ԴՐՈՒՅԹՆԵՐ ՏՈՒԳԱՆՔՆԵՐԻ ՍԱՍԻՆ**

### **Հոդված 38**

Իրավաբանական անձը, որը.

- խոչընդոտում կամ արգելում է մուտքը տարածք, շենքեր կամ դեպի սարքավորումներ (Հոդված 20);
- չի նպաստում տեսուչի կողմից տեսչական պարտականությունների սահուն իրականացմանը (Հոդված 23);
- տեսուչի պահանջով և տեսուչի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացնում գրավոր բացատրություն կամ տեղեկանք ստուգման ենթակա գործի վերաբերյալ (Հոդված 29);
- չի ենթարկվում տեսուչի կողմից կայացրած որոշմամբ կարգադրված միջոցառումներին
- չի վերացնում թերությունները տեսուչի կողմից սահմանված ժամկետում (Հոդված 33);
- չի հրապարակում տեսուչի որոշումը կամ դրա ամփոփ տարբերակը, հակադրվելով տեսուչի կողմից կարգադրված միջոցառումներին (Հոդված 36);
- վնասում, հանում կամ թաքցնում է տեսուչի հրապարակայնորեն ցուցադրված որոշումը (Հոդված 36) տեղում տուգանվում է 300.000 ՄԻՏ գումարի չափով:

Իրավաբանական անձի վերադասը, նախորդ պարբերությունում նշված դեպքերում, տեղում տուգանվում է 100.000 ՄԻՏ գումարի չափով:

Անհատ սեփականատերը, որը թույլ է տվել նախորդ պարբերությունում նշված խախտումները, տեղում տուգանվում է 200.000 ՄԻՏ գումարի չափով:

Ֆիզիկական անձը, որը թույլ է տվել նախորդ պարբերությունում նշված խախտումները, տեղում տուգանվում է 100.000 ՄԻՏ գումարի չափով:

Առաջին պարբերությունում նշված տուգանքը կարող է սահմանվել հաջորդաբար:

### **Հոդված 39**

Ֆիզիկական անձը, որը կեղծ բողոք է ներկայացրել տեսչական գրասենյակ, տուգանվում է 100.000 ՄԻՏ գումարի չափով:

### **Հոդված 40**

Եթե որևէ մասնակի տեսչական գրասենյակի իրավասությունները կառավարող հատուկ Ակտով սույն Ակտի Հոդվածներ 38 և 39-ում ներկայացված գործողությունները դասակարգված են որպես խախտում, ապա նման խախտումների համար տուգանքը սահմանվում է խախտումը կատարողի համար ավելի նպաստավոր օրենքի շրջանակներում:

## **X. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ և ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

### **Հոդված 41**

Անձիք, որոնք տեսչական պարտականություններ կատարելու համար սահմանված մասնագիտական քննությունը հանձնել են նախքան սույն Ակտի ուժի մեջ մտնելը, համարվում է, որ բավարարում են սույն Ակտի դրույթների պահանջները: Այն ոլորտներում, որտեղ նման մասնագիտական քննություններ չեին կարող հանձնվել մինչ այժմ, համապատասխան ղեկավարները պարտավոր են կազմակերպել մասնագիտական քննություն սույն Ակտի ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում: Տեսուչը, որը դեռ չի հանձնել մասնագիտական քննություն, պետք է տեսուչի համար սահմանված մասնագիտական քննություն հանձնի սույն Ակտի ուժի մեջ մտնելուց հետո մեկ տարվա ընթացքում, կամ երբ հնարավորություն է ստեղծվում

հանձնել նման քննություն (կախված նրանից, թե որ դեպքն է ժամանակային առումով ավելի ուշ հնարավոր), այլապես նա հեռացվում է գրասենյակից, ինչպես սահմանված է սույն Ակտի Հոդված 13-ում:

Հոդված 42

Տեսչության Խորհուրդը ձևավորվում է սույն Ակտի ուժի մեջ մտնելուց հետո երկու ամսվա ընթացքում:

Անօրինական Աշխատանքի և Ջրադրամության Կանխարգելման Բաժինը, որը ստեղծվել է Անօրինական Աշխատանքի և Ջրադրամության Կանխարգելման Ակտի հիման վրա (Սլովենիայի Հանրապետության Պաշտոնական Տեղեկագիր, No: 36/00), շարունակում է իր գործունեությունը: Տեսչության Խորհրդի հետ համագործակցության միջոցները կառավարվում են Տեսչության Խորհրդի ընթացակարգային Կանոններով:

Հոդված 43

Տեսչական վարույթները, որոնք սկսվել են նախքան սույն Ակտի ուժի մեջ մտնելը, իրականացվում են նախքան սույն Ակտի ուժի մեջ մտնելը գործող կանոնակարգերին համաձայն:

Հոդված 44

Սույն Ակտի դրույթներին համապատասխանող ներքին կազմակերպչական և համակարգային ակտեր պետք է ընդունվեն սույն Ակտի ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում:

Հոդված 45

Սույն Ակտի ուժի մեջ մտնելուց հետո ուժը կորցրած են ճանաչվում Վարչական Ակտի Հոդված 7-ը և Հոդվածներ 83 – 98 (Սլովենիայի Հանրապետության Պաշտոնական Տեղեկագիր No:67/94 և 20/95 – Սահմանադրական Դատարանի որոշում, 29/95 – ZPDF և 80/99 - ZUP):

Հոդված 46

Չնայած սույն Ակտի Հոդված 3-ի չորրորդ պարբերությանը, սույն Ակտի դրույթները, բացառությամբ կազմակերպմանը վերաբերող դրույթների, անհրաժեշտ փոփոխություններով կառավարում են պետական և տեղական մարմինների վարչական ստուգումները, բյուջետային ստուգումները, պաշտապնության ստուգումները և ներքին վարչական վերահսկողության այլ տեսակները, մինչև այս ոլորտները կառավարող ոլորտային Ակտերի դրույթների ուժի մեջ մտնելը, սակայն ոչ ավել քան սույն Ակտի ուժի մեջ մտնելուց հետո երկու տարվա ընթացքում:

Հոդված 47

Սույն Ակտը ուժի մեջ է մտնում Սլովենիայի Հանրապետության Պաշտոնական Տեղեկագրում տպագրվելուց հետո տասնհինգերորդ օրը:

(Տպագրված է 2002թ. հունիսի 28-ին)